

ՄՈՎՍԵՍ ԿԱՂԱՆԿԱՏՎԱՑԻՆ ԵՎ ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ
ԱՎԱՆԴՆԵՐԸ

Սաֆարյան Վ. (ԵՊՀ, Հայաստան)

shaani@yandex.ru

Բանալի բառեր՝ մոգակախարդային ճնշում, հոգևոր-մշակութային ազդեցություն, ոճական համադրություն, հրաշապատում, տարգերում, Արցախ:

5-րդ դարի հայ պատմագրության ավանդներն ուրույն դրսևորումներ ունեն 7-րդ դարի մի պատմիչի պարագայում, ով հարևան երկրի պատմություն է գրում և այդ ժողովրդի մշակութային ազդեցության կրողն է: Մովսես Կաղանկատվացու «Պատմութիւն Աղուանից աշխարհի» գիրքն այդպիսի նմանողության և ստեղծագործական ավանդների զարգացման յուրօրինակ համադրություն է: Կառուցվածքի և ընդգրկման մեջ օգտագործելով Մովսես Խորենացու սկզբունքը՝ պատմաառասպելային հենքի վրա դեպքերն սկսել ազգի ծնունդից և հասցնել իր ապրած ժամանակը, Աղվանքի պատմիչը կարևորում է նաև գոյատևման հոգևոր-մշակութային հիմունքը, դա տեսնում հայոց հետ կայուն հարաբերությունների մեջ, ներբողում դավանանքային միաձուլյ ուժը, որ անում է կրոնախոհական ծավալուն գեղումներով՝ դառնալով Եղիշեի հետևորդը: Նախընտրում է նկարագրությունների պատճառահետևանքային մանրամասները, պատմաավանդական նյութը զուգահեռում բնապատկերին և Ղազար Փարպեցու՝ Արարատյան դաշտի նկարագրության հետևողությամբ է ներկայացնում Աղվանքի բնությունը: Բացարձակացման տարվող հերոսներին (Ուռնայր, Վաչե, Վաչագան, Ջիվանշիր) ուսումնառության առարկա է դարձնում և կերպավորում Փավստոս Բուզանդի վիպականացման արվեստի նմանողությամբ, իսկ հայոց առաջին պատմիչի գիրքը անվանում է «Ագաթանգեղոսի բաղձալի Պատմություն»:

Աղվանքը պատմական ճակատագրով դատապարտված էր կամ հյուսիսի ավարառու ցեղերի և հարավի պարսկական, հետո արաբական ճնշումներին (մինչև որ հասներ արևելքի թուրք-թաթարական օրհասը) և նույնքան վտանգավոր՝ մոգակախարդային ազդեցություններին, կամ արևմուտքի՝ հայոց և մասամբ հունաց հոգևոր-մշակութային լույսի ենթակայությանը: Այս սահմանագիծը ընդգծվում է և՛ պատմաքաղաքական, և՛ մշակութային, և՛ կենցաղային մակարդակներում՝ մի կողմից անընդհատ բերելով մթին պատկերների մղձավանջը (Ջեբու խաքանի արշավանքները, Աղվանքի Վիրո կաթողիկոսի կերպարի հակադրությունը խազարների Շաթ տիրակալին և սրա հյուրընկալության մարմնեղեն աղտոտությունների խտացումը և այլ պատկերներ), մյուս կողմից՝ և քրիստոնեության տարածման, և Մաշտոցյան գրերի ու Ավարայրի լուսեղեն ընդհանրության հիմքի վրա հայոց քաղաքակրթական շառավիղումները Աղվանքում, որ պատմիչը շեշտում է, օրինակ, այսպիսի ձևակերպումով. Վաչագան Բարեպաշտի ներբողի մեջ գրում է. «Գովասանքը ավելի պակաս եղած չեմ համարում արևմուտքի վրա իշխող Կոստանդին կայսեր գովասանքից, կամ ոչ էլ Տրդատ Արշակունուց, որ փրկեց Մեծ Հայքը և մեզ՝ *արևելցիներին*»:

Հայ պատմիչների հետ զուգահեռ քննությունները հաստատում են ոչ միայն ընդհանրություններն ու հայոց գերակայության փաստի պատմական իմաստը, այլև հարևան երկրների հարաբերության քաղաքական գնահատականները, ինչը տեսնում ենք, օրինակ, հայերի դեմ վտանգավոր քայլերի դիմած Ուռնայր արքայի դրական բևեռացումների, Ջիվանշիրի նկատմամբ հայ նախարարների մեջ ծնունդ առած «խիստ նախանձի» և այլ դրվագներում: Աղվանքի պատմությունը դիտելով հարևանների հետ հարաբերության մեջ՝ նա արժևորում է հայոց ու վրաց հետ քաղաքական-մշակութային առնչությունները, հայերից շատ ավելի բռնկուն ցավով քննադատում նաև «անիծյալ Կյուրոն» վրաց կաթողիկոսի ջանքերով նրանց եկեղեցու անջատումը հայոց ուխտից, որ շեշտի, թե «աղվանները չհեռացան ուղղափառությունից և հայերի հետ

միաբանվելուց», և այս հարաբերությունների մեջ կարևորում «անառիկ» Արցախի դերը: Իր ուսումնասիրության դպրոցի նման Կաղանկատվացին ևս պատմական փաստը հաճախ հաղորդում է ոչ միայն վիպական մանրամասներով, այլև զգացմունքային հագեցվածությամբ, դրանից բխող խոսքի պատկերավորությամբ և հոմանիշային կոլտակում-պեսպեսության ու այլ հնարանքներով:

Ազդեցությունների, մշակութային ենթակայության այս հարաբերություններում հեղինակային ինքնատիպության արտահայտություն է այն, որ հայ մատենագիրների հետևողությունը պահպանելով տարեգրական, վիպական և կերպավորման ու պատկերավորման շատ որակներ՝ Մովսես Կաղանկատվացին չի ընդունում մերժելի հարևաններից եկող մոգային, աղանդավորական հարվածը, դրանց ծիսական վերապրուկներն ու աղվանների մեջ թողած նստվածքը, միաժամանակ բնականորեն իր ոճի մեջ ներառում է արևելյան գրույց-առասպելային պատմելածներ: Կենցաղային իրեղենությամբ հատկանշվող այդպիսի հրաշքային տարրերը համադրվում են քրիստոնեական հրաշապատումին, և դա առկա է, օրինակ, Գրիգորիս կաթողիկոսի նշխարքների որոնման, դրանց տեղը ճշտելու և Վաչագան Բարեպաշտի կողմից Ամարասում վերահուղարկավորելու ողջ դրվագում:

MOVSES KAXANKATVATCI AND TRADITIONS OF ARMENIAN
HISTORIOGRAPHY

Safaryan V. (YSU, Armenia)